Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում կազմավորված գավառներում ստեղծվեցին իշխանության նշանակովի մարմիններ՝ հեղկոմներ, որոնց նպատակը տեղերում խորհրդային իշխանության հաստատումն էր:[1] Գավառները բաժանվում էին տեղամասերի, վերջիններս էլ՝ գյուղական հասարակությունների, որոնց հեղկոմները կենտրոնական իշխանության հետ կապը պահպանում էին տեղամասային հեղկոմների միջոցով: Խորհրդային իշխանության հաստատման գործընթացը կազմակերպում ու ղեկավարում էր ՀԿ/բ/Կ Կենտկոմը: Իշխանության պետական մարմինների կազմավորմանը զուգընթաց ձևավորվում էին գավառային ու շրջանային (գավառակային) կուսակցական կազմակերպությունները: Սակայն նորաստեղծ իշխանության պետական ու կուսակցական մարմիններն ի սկզբանե լուրջ տարաձայնություններ ունեին իրականացվող քաղաքականության և իրենց իրավասության սահմանների վերաբերյալ հարցերում: Երկրի ներքին կյանքին բնորոշ այս իրողությունն առանձնակի դրսևորում ունեցավ Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ Հեղկոմ ստեղծվել էր դեռևս 1920թ. նոյեմբերին՝ թուրքերի կողմից գավառը գրավելուց հետո, և համագործակցելով թուրքերի հետ, հույս ուներ մի կողմից թուլացնել թուրքական օկուպացիոն ռեժիմը, մյուս կողմից՝ ամրապնդել խորհրդային իշխանությունը: Սակայն այդ համագործակցությունն ավելի շուտ վարկաբեկեց խորհրդային իշխանությունը, և հեղկոմը ստիպված եղավ 1921թ. հունվարի 25-ին վայր դնել իր լիազորությունները: Կուսակցության թույլ հեղինակությունը բարձրացնելու և Ալեքսանդրապոլի խորհրդայնացումը նախապատրաստելու նպատակով 1921թ. ապրիլին այստեղ անցկացված Հայաստանի Կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպության առաջին կոնֆերանսը դատապարտում և քաղաքականապես սխալ է որակում Ալեքսանդրապոլի Հեղկոմի գործունեությունը:[2] Դրանից հետո գավառում կուսակցության քաղաքականությունն իրականացնում էր Գավկոմը՝ իր մի շարք բաժիններով՝ ինֆորմացիոն-կազմակերպչական, հաշվառման և բաշխման, ագիտացիոն-պրոպագանդիստական, գյուղացիների մեջ աշխատանքի և այլն:[3] Գավկոմի հիմնական խնդիրներն էին՝ կուսակցության հեղինակության բարձրացումը և կուսակցականների թվի ավելացումը: Ի դեպ, շատերը մտնում էին կուսակցության շարքերը՝ իրենց գոյությունը մի կերպ պահպանելու համար: Գավկոմին ուղղված կուսակցականների դիմումներից երևում է, որ նրա հաշվառման և բաշխման բաժնի ձեռքում կենտրոնացված էին առաջին անհրաժեշտության մեծաքանակ իրեր և մթերքներ, որոնք բաշխվում էին միայն կուսակցական ընկերներին:[4]

Թուրքերի հեռանալուց հետո՝ 1921թ. մայիսի 23-ին, կազմակերպվում է Ալեքսանդրապոլի գավհեղկոմը՝ Ս. Մանուկյանի նախագահությամբ:[5] Չնայած որ գյուղական, գավառակային և գավառական հեղափոխական կոմիտեների կազմակերպման մասին ՀԽՍՀ ժողկոմխորհրդի դեկրետում հստակ մատնանշվում էին հեղկոմների գործառույթները,[6] այնուամենայնիվ կուսակցական մարմինները հաճախ իրենց վրա էին վերցնում նաև դրանք:

Ալեքսանդրապոլի գավառի բնակչությունն իր վրա կրեց խորհրդային իշխանության կազմավորման շրջանի ողջ ծանրությունը թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական առումով: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը տնտեսական կյանքում և կոմունիստական կուսակցության մենատիրության հաստատումը քաղաքական կյանքում

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1022, ց. 3, գ. 336, թ. 1:*
[2] *Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 3, թ. 6:*
[3] *Նույն տեղում, գ. 6, թ. 14:*
[4] *Նույն տեղում, գ. 22, թ. 4:*
[5] *Տե՛ս, Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, Եր., 1974, էջ 61:*
[6] *Նույն տեղում, էջ 63-71:*

նոր փորձություններ դարձան Ալեքսանդրապոլի գավառի բնակչության համար: Թուրքական զինակալման պայմաններում գտնված Ալեքսանդրապոլի գավառում շարունակվում է իրեն սպառած և չարդարացված ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Թուրքերի կողմից թալանված բնակչության վերջին ունեցվածքը բռնագրավվում է կարմիր բանակին կերակրելու համար: Գյուղի բնակչությունից պահանջվում է տրամադրել իր հացի ողջ ավելցուկը քաղաքի բանվորության և զորքի կարիքների համար՝ դրա դիմաց ստանալով անդորրագիր, որ իրավունք կտար նրանց ապագայում համապատասխան քանակի վայրուտային ապրանք պահանջել պետական մթերանոցներից:[7] Սակայն միշտ չէ, որ այդ ստացականները տրվում էին:[8] Ընդ որում, պարենամթերքը բռնագրավվում էր ոչ թե ավելցուկ ունեցող գյուղացիներից, այլ ամբողջ գյուղից: Գաղթականներով ու որբերով հեղեղված Ալեքսանդրապոլի գավառում տնտեսական ծայրահեղ քայքայման պայմաններում ապրող չքավոր գյուղացիները վճարելու գրեթե ոչինչ չունեին: «Այսու պատիվ ունենք հայտնելու Ձեզ,- կարդում ենք Ղազրեխ գյուղի հասարակությունից Ալեքսանդրապոլի հեղկոմին ուղղված 1921թ. հունիսի 7-ի խնդիրում,- որ ներկա թվի մայիսի մեջը մեր 4-րդ գավառամասի Հեղկոմի նախագահի շրջաբերական հրամանի համաձայն մեզանից պահանջվում էր 20 փութ միս, բայց մենք ընչազուրկ ենք և քայքայված, միանգամայն չենք կարող այդպիսի պահանջներին բավարարվածություն տալ, քանի որ մենք կանաչով ենք սնվում: Ուստի խնդրում ենք հնարավորին չափ մեզ խնայեք: Ներկա ողորմելի դրության մեջ գտնվող ընչազուրկ ու քայքայված գյուղացիներիս ազատեք այդ պահանջից»:[9] Ճիշտ է, հետագայում հեղկոմը որոշում է գյուղացիներին և քաղաքացիներին վճարել բանակի կարիքների համար «բռնագրավված հացահատիկի, խոտի ու տավարի արժեքը», բայց միևնույնն է, գյուղացիները չէին կարող բավարարել այդ պահանջները: 1921թ. հունիսի 21-ին Քավթառլուի բնակիչները՝ Ալեքպոլի պարենավորման բաժնի վարիչին ուղղված գրությունում տեղեկացնում են, որ իրենք գտնվում են անելանելի դրության մեջ և խնդրում են շուտափույթ վերացնել գնումները:[10]

Բռնագրավումները կրում էին անկանոն և զանգվածային բնույթ: Դրանցով զբաղվում էր թե՛ հեղկոմը, թե՛ գավկոմը և թե՛ զինկոմը: Այս վիճակին վերջ տալու նպատակով Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմի ՆԳ բաժնի վարիչ Հ. Ամատունին 1921թ. մայիսի 6-ի շրջաբերականով արգելում է ամեն տեսակի բռնագրավումները և խուզարկությունները, առաջարկում միլիցիայի պետին և գավհեղկոմների նախագահներին՝ իրենց իսկ անձնական պատասխանատվությամբ, անմիջապես դադարեցնել անպատասխանատու անձնավորությունների ինքնակամ և ապօրինի գործունեությունը և խստագույնս հսկել սույն շրջաբերականի իրագործումը, իսկ մինչ այդ տեղի ունեցած բոլոր խուզարկությունների և բռնագրավումների մասին խիստ քննություն կատարելուց հետո շուտափույթ իրազեկ անել իրեն:[11] Չնայած սրան՝ բռնագրավումները երկար ժամանակ չէին դադարում: Բնակչությանը բռնագրավումներից չի ապահովում նաև անցումը նոր տնտեսական քաղաքականության, որի հիմքում դրված էր պարենհարկը: Մի կողմից հասկանալով, որ բռնությունների քաղաքականությունը վնասում է գյուղացու տնտեսությանը, կառավարությունը անցնում է պարենհարկի, մյուս կողմից՝ ցուցակագրելով գյուղացու ամբողջ ունեցվածքը՝ շարունակում էր այդ բռնագրավումները: Ալեքսանդրապոլի գավհեղկոմի նախագահ Ա. Շահգելդյանը բոլոր գավառային և գյուղական հեղկոմներին ուղղված հրամանում տեղեկացնելով պարենառուրքի անցման մասին, հայտնում է, որ բերքը թաքցնողները կհամարվեն ժողովրդի թշնամիներ, կուլակներ, որոնց պետք է բանտարկել և ունեցվածքը բռնագրավել:[12] 1921թ. սեպտեմբերի 15-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության գավառային կոմիտեն և Ալեքսանդրապոլի գավառային հեղափոխական կոմիտեն կոչով դիմում են գյուղացիներին հանձնելու պարենառուրքը՝ միաժամանակ սպառնալով բերքի չափը թաքցնելու դեպ-

---

[7] *Տեն,ՀԱԱ ,ֆ.1022, ց.4, գ. 72.թ 20.*
[8] *Տեն ՀԱԱ, ֆ. 144, ց. 3 գ. 2, թ. 44:*
[9] *Նույն տեղում, թ. 82:*
[10] *Տեն ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 2, թ. 75:*
[11] *Տեն, ՀԱԱ, ֆ. 3, ց.1, գ.19, թ. 10:*
[12] *Նույնը:*

քում բանտ նստեցնել, ունեցածը բռնագրավել, նույնիսկ կանգ չառնելով գնդակահարության առաջ:[13] Սեպտեմբերի 19-26-ը պարենտուրքը հավաքող գավառային հանձնաժողովը հայտարարում է սառգման շաբաթ՝ գյուղացիներին տեղեկացնելով, որ նրանք այդ շաբաթվա ընթացքում հնարավորություն ունեն ուղղելու իրենց սխալ տվյալները, այլապես նրանց փրկություն չկա:[14] Պարենտուրքի հիմնական սկզբունքը դասակարգային մոտեցումն էր, որի համաձայն՝ հարկ դրվում էր միայն հարուստների վրա, որպեսզի գյուղացիներն իրենք մատնանշեն, թե ովքեր են հարուստները:[15] Այս սկզբունքի կենսագործումը սրում է իրավիճակը գավառում: Բնակչության շրջանում լուրեր են տարածվում խորհրդային իշխանության ժամանակավոր լինելու մասին: Ալեքսանդրապոլի գավառային Արտակարգ հանձնաժողովի նախագահին ուղղված մի զեկուցագրում նշվում էր, որ բնակչության մեծամասնության, հատկապես գաղթականության վերաբերմունքը խորհրդային իշխանության նկատմամբ թշնամական է:[16] Ալեքսանդրապոլի կոմունիստական կուսակցությունը ստիպված է լինում դիմելու ազգաբնակչությանը՝ հորդորելով հանգստության և խաղաղության:[17] Քաղաքական աշխատանքներ են տարվում կուսակցության և խորհրդային իշխանության հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: 1921թ. նոյեմբերի 24-ի շրջաբերականով Ալեքսանդրապոլի գավառի հեղկոմի նախագահն առաջարկում է. «...առանձին խնամքով ընդառաջ գնալ տեղական կարիքներին և բավարարել աշխատավոր տարրերի արդարացի խնդիրները, նպատակ ունենալով այն թերահավատության դեմն առնելու, որը հետևանք է նման անտարբերության և հետ է մղում խորհրդային իշխանությունից աշխատավորության լայն զանգվածների ու նպաստավոր հող ստեղծում մեր թշնամիների պրովոկացիոն գործունեության համար»:[18] Մեկ այլ շրջաբերականով հեղկոմի նախագահը առաջարկում է գավառակային հեղկոմներին՝ հրաժարվել դատական գործառույթներից և դրանք հանձնել դատական հիմնարկություններին:[19]

Ստեղծված իրավիճակն օգտագործվում է կոմունիստական կուսակցության քաղաքական իշխանությունն ամրապնդելու համար: Կուսակցության քաղաքականությունից բնակչության դժգոհությունների համար մեղադրվում են իշխանության մարմինները, որոնք իբր ճիշտ չէին իրականացնում կուսակցության քաղաքականությունը: Բազմաթիվ անմեղ մարդիկ հալածանքների և բռնությունների են ենթարկվում: Կուսակցությունը պարբերաբար անցկացնում է իր անդամների զտում, և մեծ մասամբ խորհրդային իշխանության մարմիններում աշխատողներն են հեռացվում կուսակցությունից, նրանցից շատերը նույնիսկ ձերբակալվում են:[20] Ալեքսանդրապոլի գավառի կուսակցականների վերացուցակագրումը տեղի է ունենում 1921թ. հունիսի 1-3-ը:[21] Այն հնարավորություն է տալիս կուսակցությունից հեռացնելու հատկապես մտավորականներին:[22] Հերթական վերացուցակագրումը տեղի է ունենում սեպտեմբերին:[23] Մինչև 1921 թվականի վերջերը կուսակցությունից հեռացվում է մտավորականության մեծ մասը և ապահովվում կոմունիստական կուսակցության հաղթանակն առաջիկա ընտրություններում:

1921թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին Ալեքսանդրապոլի գավառում Հայաստանի խորհրդային իշխանության իրականացրած քաղաքականությունը չբարելավեց բնակչության տնտեսական վիճակը, այլ միայն ամրապնդեց կոմունիստների քաղաքական իշխանությունը՝ հիմքեր ստեղծելով կոմունիստական մենատիրության հաստատման համար:

---

[13] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 16, թ. 4:*
[14] *Նույն տեղում, թ. 7:*
[15] *Նույն տեղում, գ. 66, թ. 31:*
[16] *Նույն տեղում, գ. 6, թ.19 :*
[17] *Նույն տեղում, գ. 16, թ 6:*
[18] *Նույն տեղում, գ. 18, թ 15:*
[19] *Նույն տեղում, թ 11:*
[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 158, թ 3:*
[21] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 68:*
[22] *Նույն տեղում, գ. 4, թ. 36:*
[23] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 1, թ. 13:*

АЛЕКСАНДРАПОЛЬСКИЙ УЕЗД В ПЕРИОД УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Резюме *К. Алексанян*

После ухода турков в апреле 1921г. население Александрапольского уезда на своих плечах вынесло все трудности и последствия установления Советской власти: военный коммунизм, продразверстка, от которых не освобождал и переход к НЭП-у.

Сложившуюся ситуацию компартия использовала в целях укрепления своих позиций, обвиняя в трудностях исполнительные органы Советов, которые якобы неверно реализовывали политику партии.

Периодически проводившиеся чистки исключали из партии в основном сотрудников Советов, которые были в основном представителями интеллигенции, многие из них были арестованы. Все это обеспечивало победу компартии на выборах в Советы, создавая условия для утверждения единовластия коммунистов.